

ԽԱՐԵՐԱԿ

ՅԵՐԱՅՈՒՆ
ՆՈՅՄԲՐՈՅՅ

Գինն է 10 կ. Գառառնեքում 12 կ. 1911, Շաբաթ, ՓԵՏՐՈՒՐԻ 19 -ին. Թիֆլիս. №8.

Դ Ի Մ Ր Կ Ր Է Ր Ն Դ Է Ս



—Բարեկենդան օրեր է—խելքը գրանցրից կորել է:
(Նայեցէ, որն է մեր զիմաղ)

ԱՄՏ. ԵՄ. ԽՈՅԱ

Բ Ա Ց Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծարանական-աստիքական պատկերագրող շաբաթամերթի

ԼՈՅՍ Է ՏԵՄԼՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զրկիչ, անկեղծ և կեղծա-
ւոր գործիչ-կործիչներ և խայտառակիչներ:

Անհրաժեշտ բերք բոլոր բնահիմքերի համար

«ԽԱԹԱԲԱԼԱ» շաբաթին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ բեֆերդ ուզի:
Հասցէն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»
Եւրոպայից՝ Նիդերլանդացի ՊԱՍ. ԵՐԻՑԵԱՆ



«ԽԱԹԱԲԱԼԱ»

Բ Ա Ժ Ա Ն Ե Գ Ի Պ Ե Ծ Ե Ծ Կ Ի

Տարեկան 3 ՌԵՊՈՐՏԱՅԺՅԻ
 Կէս տարին 3 »
 Երեք ամիսը 1 » 50 կ.
 Ամիսը — 50 »
 Թիֆլիսում տարեկան . 4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐԶԱՆԴԱ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.
 Տարեկան 12 ռ.
 Կէս տարին 6 ռ.
 Երեք ամիսը 3 ռ. 50 կ.
 Մէկ ամիսը 1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել
 ցամակացողին 75% զեղծ
 Ձրի կարգացողներին պէտք է նկարենք
 Գ Լ Ի Ի Վ Ս Ե Բ



«ԽԱԹԱԲԱԼԱ» ՕՐԱՅՈՅՑ

1911 ՓԵՏՐԻԱՐ 28 օր

19

Суббота ԶԱՐԸԹ Դուսիս 5

Արեւ կը ծագի և մար կը մոռնի երբ ժամանակը կը գալի

Փոփոխութիւններ կը տեսնուին Կարգաւարտները

19 փետրարի.—Այսօր շաբաթ է լինելու և Բուն բարեկենդանի նախօրեակը: Մարդիկ ուրախ են լինելու, բացի տիրելուց:

20 փետրարի (անպայման կիրակի).— Եթէ հողմեր չլինեն այսօն Բուն բարեկենդանի է լինելու, բազմաթիւ մարդիկ հարբելու են, ոմանք կը ընկնեն փողոցների և մայթերի վրայ:

21 փետրարի (երկուշաբթի). — Եթէ չենք սխալուում պատի առջին օրը. պատի մեղիայի օր, շատ մարդկանց զուլս ցաւելու է, ոմանք հիւանդանալու են: Շիրվանդադէն պատ է պահելու, որ այլևս մեղք չգործի ու չմեղանչի իր դէմ:

22 փետրարի (երեքշաբթի).—Քուռը վարարելու է: Գանգային հորիզոնները փոքր ինչ պարզելու են:

23 փետրարի (չորեքշաբթի).—Սփած լորինները թթւելու են, պատաւ աղջիկները տիրելու: Չորս ինքնասպանութեան փորձ կը լինի:

24 փետրարի (հինգշաբթի).—Երկու նորածին երեխայ փողոց կը նետուեն: Ինչը ընտանիքներում ամուսնական ընդհարում կը լինի:

25 փետրարի (ուրբաթ). — Կրկնակի պատ, սոված փորերին սպաս: 15 բանաստեղծ է ծնւելու, իսկ մէկը մեռնելու:

Յիշատակարան

Թերթերում մի դրագողի մասի երկար և ընդարձակ յօդած է լոյս տեսնելու: Հայ թերթերը անպայման հայտնելու են իրար:

Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ
Փարեմուգ



ԱԶԵՏԱՐԸ ԿԵՍՐ ԱԼԷՔՍԵՆԳՐ II.

(Գիւղացիութեան ազատագրութեան 50-ամեայ տարեգարծի առթիւ).




«ԿԱՐՄԻՐ ՍԵՆԵԱԿ»

Թիֆլիզի մէջ

Ակաս, մակաս, կարմիր յողան էր պակաս, փնոք Աստու, տաղ մնացինք, քոն յաջմեքրովս ատ քամբախն ալ տեսանք: Կարմիր յողան, կարմիր աղջիկ, կարմիր տղան, անտէր, անտիրական: Հիմի օր թամամ լուսաւորութեն է. ազատութեն է, յառաջադիմութեն է: Հպա ալ ինչի՞ գան-

գատ կենիք թէ մեր վարժատները աղջկաներուն ու մանչերուն լաւ թարպիա չին տայ, մարիֆաթ չին սորվեցնի, լաւ չին կը թի: Աղբւր, աստից ալ խաս յուսճւմ, ալ ինչ գուզիք: Հէր, մէր, աղբար, Ասուած, հոգի, թասիպ, նամուս, ապուս, հայկայ վարժատուն, վարժապետ... բիթուն, բիթուն մեր կարմիր աղջկները սե հոգի մանչերի հետ մուշավարայ էրին ջուրը գըրին, զուլայ ճամբան գտան, թոփ էղան, կանտրախտ կապեցին իրենց հմար բախ-



ԳԻՒՆՆԱ ԲԱՆԴՈՒ
ՄԱՆՐԱՎԻՊ

ՄԱՆՐԱՎԻՊ

(Նւէր յոյժ յարգելի ունեզարդ ուսուցչիս)

շայ յողայ սարքեցին, անունն ալ դրին «Կարմիր սենեակ» ու նէս լցան շների ու կատուների դայդի, անտէր կովերի ու եղների չեշիտ խառնուան յիրար ու քէֆ սարգեցին: Ալ ուշանալին ինչ է. ալ պսակն ինչ է. ալ դայտով զանուանով մարդ ու կընիկ ինչ է. ալ ամօթն ինչ է. ալ հարս ու փեսան ինչ է: Վայ փշանաք դուք, օղուլ, փշանաք: Վայ, կարմիր աղջկներ, կարմիր մանչերուն հետ կարմիր յողին մէջ թաղիմ ձեզի: Վայ, անամօթ լրբեր, փշանալու լակոտներ, Աստծու յերեսէն թափածներ: Վայ-վայ, աս ինչ ասրի հասանք, աս ինչ բաներ գիմանանք. աս ինչ խայտառակութեն տեսնինք կը: Իէ, հիմի շիտակն ըսէք, խօսերան ու ժանդախտը շատ զարար կուտան մեզի, թէ, կարմիր աղջկներն ու մանչերը: Զանր՛մ, շաշմէր, մնացիր իմ, չիմ գիտէր, ինչ ըսիմ: Թէ ըսիմ կողպեցէք վարժատները, քանդեցէք զիմնադները, պիտի ըսիք Ղալաջի Մարգարը հին մարդ է, պառաւ է, խելքը կորցրել է, յուսում-խառնազգիմութեն չի սիրէ: Զանր՛մ, դուրբան յըլիմ ձեզի, յուսում սիրեմ կը, հմը կարգին յուսում, հայ քրիստոնի յուսում, կատարեալ մարդու յուսում, Աստծու յուսում: Ատ վարժատները մեզի կուտան սատանի յուսում, լրբի յուսում, կարմիր յողայի յուսում: Ատ վարժատներից թաքմիլը կառնին կարմիր աղջկաներ, կարմիր յողաներուն հմար: Զէ, աղբւր ատիկ յուսում չէ, ատիկ խայտառակութեն է:

Ախ, հարեր, ախ մարեր... սալթ վարժատները մեղաւոր չեն, վենձ մեղաւորը դուք էք: Դուք ձեր աղջկներուն անտէր անտիրական վեր իք վարի: Անոնք կէս գիշերին, մէջ գիշերին առանց հօր ու մօր, առանց աղբոր բուլվարներուն, բաղերուն, ուլիցներուն, թատրօններուն մէջ իրենց կավալերներուն հետ գեաղմիշ գլին կը, հազար չեշիտ քեարսալութեն կենին կը ու կէս գիշերին ետ լուսու դէմ տուն գուրբան կը: Հէ հարց ու փորձ կենիք, թէ վեր տեղ էիք, ինչի՞ յուշացար, յո՛ւմ հետ տուն էկար: Հմը, շիտակն օր ըսինք, չէք էլ կրնայ հարցնի. չունքի, մէկ օր՝ յուսում առած աղջիկ է, ազատութեն է, մօզան ասպէս է. մէկ էլ օր հարերն ու մարերն էլ բարի պտուղ չեն. անոնք ալ յիրարից գողտուկ եարաններ ունին, անոնք ալ տէյմօր կէս գիշեր միան տեղերը ժուռ գուգան կը: Զէ, աղբար, չէ. գեամեցէք ատ աղջկներուն օքեցէք ատոնց տան մէջ, դարավուլ քաշեցէք ատոնց վրայ, խրատեցէք. բազի-բազի ալ, զարար չունի՛ յանկջները քաշէք: Դուք Աստծու ճամբով գնացէք, օր աղջկներն ալ ձեր յետեհն գան:

Նաւասարդեան աղայիս գրածն օր «Սուրհանդակին» (№ 239) մէջ կարգացի՛ մագերս բիզ-բիզ էղան, մտքիս մէջ ըսեցի. ախ, բինդանբիրայ մէ սև օձմ դառնայի, մտնէի ատ կարմիր յողան ու բիթունին տեղոց տեղ խէթէի, խեղթէի, ջանս գինջանար:

Հարեր, մարեր, հոգարնրձուներ, վարժատներ, տեսնչներ, քաղաքացիք, աս զըրածներս միք կարգա ու անցնի, թոփ էդէք, մուշավարայ էրէք, ատ կարմիր յողաները քանդէք, բրիշակ դարձրէք, ատ կարմիր աղջկներուն իրենց կարմիր կավալերներուն հետ վառեցէք, եանդուն ցկէք, կարմիր յողան ալ վառեցէք. օր խրատ յըլի. մէմալ ատպէս մեզը չուտեն:

Ղալաջի Մարգար



* *

Բանտս անաւոր որպէս մի տիտան Նայում է արթուն ժայռի քարձունքից, Պատուանիս տակ գետն հսկայական Յորձանքներ տալով փախչում կապանքից:

Երբեմն ուժգին ափին է տալիս Բանտիս ժայռ պատին փրփրած կաչում, Ժայռից ջախջախած ալիքը լալիս Անվերջ բողբոլով քարափից փախչում...:

Գիշեր է պայծառ... Նայում եմ հեռուն — Կապոյտ երկնքին ցուրն աստղերով. Լուսինն է փայլում ժայռի ծերպերում Երկինք մազցում կաթիր շողերով:

Ու միտքս իսկոյն թափերով ուժգին Կեանքի գաղտնիքն է ուզում թափանցել. Ինչո՞ւ ենք ախպէս ստրում լալազին Վեր գաղափարներն ինչո՞ւ մոռացել:

Ինչո՞ւ է կեանքը կարմիր արեան ծով, է՞ր է թշաւոր լալիս մշտական. Ինչո՞ւ աշխարհը գեհննի բոցով Գոյութեան կոխ է յախտննական:

Իրականութիւն — ողբագին լալու... Լուռ է երկինքը. լուսինը կարմրած — Բայց միթէ՞ մի օր չի ցամաքելու Խեղճի արցունքը դարերով հոսած...:

Նւ գետը ուժգին ափին է տալիս Բանտիս պատերին փրփրած կաչում, Ժայռից ջախջախած ալիքը լալիս Առանց պատասխան լուռ տունջ փախչում.

Մրգար Պայազաս



էր երբեմն երեւիլի փիլիսօփայ մի, որոյ անունն Բահլուլ: Եւ քանզի ամենքին փիլիսօփոսքն այնմ ժամանակի տարօրինակութեամբն իւրեանց «գիւանա» (խենթ) կոչէին, այնպէս և Բահլուլ փիլիսօփան ի բերան գոհեկաց կոչէր «Իւլանայ Բահլուլ»: Հրամանաւ Ենովայի, այնմ ժամանակի՛ մանկունքն կամ պատանիք ոչ մեռանէին, այլ յորժամ հասանէին ի խորին ծերութիւն, յայնժամ գայր «գրողն», որ էր Գարբիէ հրեշտակապետն և պահանջէր զիւր «ամանաթն» (այսինքն հոգին):

Դիւանա Բահլուլն յորժամ զգաց, զի մերձեցեալ է վախճան կենացն և շուտով «գրողն» կըգայ վասն իւր ջանին, փախուստ տայ, մտանէ ի մի խանութ գալլաքի (որ է վարսավէր), տա ածիլել զիւր միրուքն և զբեխերն և դուրս վազեալ փողոցն, խառնի ընդ փողոցային գեաղա-գիւղայքն և գնելով մի լուճայի ճան (որ է վէգ-կօճի), իբրև մանուկ՝ խաղա ընդ նոսա, կամելով խաբել զգրողն: Խնգայ յոյժ Գարբիէն մեր և մերձենալով, բռնէ ամուր զթնն Բահլուլի:

— Տնւր զամանակն քո, Բահլուլ: — Գարբիէլ ապէք, դու տեսանես, զի պատանի եմ և մազք նոր բուսանի յերեսս. ընդէր առնես զհոգիս, — ասէ Բահլուլ սոսկմամբ և բողբոջը ջանն անկեալ: — Նոր հրաման ել Ենովայն, զի յետ այսու ոչ ինչայեմք զմանուկսն և զպատանիսն:

— Ընդէր այդպիսի սոսկալի հրաման եհան Ենովան. ոչ ապաքէն նախկինն գերագասելի էր, զի մեռանէին ալեզարդքն միայն և այն՝ խաղաղ ի մահկին իւրեանց, առօք և փառօք:

— Բահլուլ, դու եղբր պատճառ այդմ անխարականութեան. ընդէր կամէիր խաբել զիս, ածիլելով զմիրուքդ և զբեխերդ և խառնելով ընդ գեաղա-գիւղայից, փառք և պարծանք քո տալով մոռացութեան:

Ձղջաց յոյժ փիլիսօփայն Բահլուլ, սասակայն ուշ էր և գրողն մանգաղն ի ձեռին կանգնեալ էր զլխավերեն նորա...

Մանրավէպս այս մեկնաբանէ առակագէտն մեր Ղազարոսն Աղայիան, ամէն: Ընդդիվ Արեղայ


— Պարոն փաստաբան, դուք ձեր կեանքում քանի՞ արդար դատ էք պաշտպանել:

— Մի անգամ... այն էլ ոչինչ չեմ ստացել, որովհետև արդար դատ ունեցողները մեծ մասամբ արդատ են լինում:

— Ուրեմն այդ է պատճառը, որ ինձ հանցաւոր ճանաչեցին և դատապարտեցին 5 ամիս բանտարկութեան:

Մ. Աղայեան

ՀԱՅԿԵՆՆԵՐԻ
ՅՈՒՆԵՍԿՈՒՅԻ



ՕՆՆՆՆՆՆՆՆ

—Աղջիկեր, ինչի՞ համար էք այստեղ հաւաքուի:
—Է՛հ, ինչ արած, տեսնում ենք, ժողովուրդը չենք գնում—ու բացի այդ մեզ ոչ մի ուզող չկայ, հարբանա-
տեալ եկել ենք այստեղ, քաղաքային կազմակերպման մէջ տեղ խնդրելու, որպէսզի գուցէ Ք-ն պահուկու հանա-
պարհը գտնենք... ասում են, որ այդ բանը այստեղ կեցւած է վերում ..

№ 2 Բ Ի Բ Ա Ռ № 2

Գրական-քաղաքական-հասարակական և խրատողական օրաթերթ:

Բաժանորդագրություն չենք ընդունում, իսկ հատավաճառին բոլորովին հակառակ ենք:

Տպում ենք 10000—15000 միանգամից դասարանների վրայ փթով ծախելու, (օրինակը մասամբ վերցրած է «Հորիզոնից»):

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր ազահուծիչն ու աչքածակութիւնը այնքան շլացրեց մեզ, որ մենք մեր «Բիրառ» թերթի առաջին №-ը տպեցինք 18,000 օրինակ մի անգամից մատակարարների վրայ փթի տակ սաղացելու և մինչև անգամ յոյս ունէինք երկրորդ տպագրութեան, բայց մեր յոյսերը ապարդիւն անցան, որովհետև մատակարարները մտի թանկութիւնից օգտւելով աւելի հաստ թուղթ են գործածում և մի բան էլ թղթից օգտւում, այնպէս որ մեր 18,000 օրինակ տպած պատւական թերթերը մնում են խմբագրատանը դարսած, ուստի ի գիտութիւն «Բիրառի» ընթերցողների յայտնում ենք մեր խմբագրական վերջին ժողովի որոշումը:

Փոխանակ գրաշարների, տպարանատէրերի, ցրեիցչների ու ցնդուրների հետ գործ ունենալու, աւելի լաւ է մեր թերթը երկու շաբաթ մէկ անգամ հրատարակենք «Ստիպարալա» շաբաթաթերթում, իսկ մենք ըստ հայկական սովորութեան մուրձադուրս գանք:

ԱՌԱՋՆՈՐԳՈՂ

Մենք մեր «Բիրառ» թերթի առաջին իսկ համարում խոստացանք հայութիւնը ազատել միւս հայ թերթերի խմբագրութեան ճիրաններից, և մենք, մեր այդ սուրբ խոստումը կատարեցինք, ցոյց աւելնք ընդհանուր հայութեան մեր կարեկցութիւնը, մեր սէրը:

Ընթերցողը գուցէ զարմանայ մեր այս ասածներից և մեր երեսին ապշած նայելով ասի.

— Ի՞նչ արիք, կամ ի՞նչ խոստում կատարեցիք:

Եւ նա իրաւունք ունի ասելու, քանի որ մեր արած լաւութիւնից, մեր արած բարիքներից ոչ մի մասն չի մտել նրա գրքւանը, քանի որ ամեն մի հայ բարութիւն ասում է նրան, եթէ նրան ուտեցնում, կամ խմեցնում են:

Իսկ մենք՝ մեզ այդպէս ասողին կասենք.

— Ո՛չ պարոն, դուք սխալուում էք:

Նահանգապետի մօտ ամիսներով գնալ գալը, թերթ հրատարակելու իրաւունք ձեռք բերելը, մի քանի բուրլու մարկաներ գնելը, թղթավաճառից ծնկաչոք նիսիս թուղթ խնդրելը և այլն և այլն բաների համար

տանջելուց յետոյ, պատրաստի ու տպած լոյս աշխարհ թերթ ընծայելը, չհաշած ամբողջ օրը խմբագրատանը նստած խըզըրզելը, իսկ այս բոլորը ձեռնամար, յանուն հայ ազգի, և ընդհանուր հայութեան յառաջադիմութեան:

Եւ ձկ կասի, թէ այդ բոլորը մի մեծ բարութիւն չէ, այլ մի չնչին բան:

Հրատարակիսուս

ՄԵՐ ՅԱՆՆԵՐԻՑ

III *)

Ձանազան թերթերում կարգում ենք, որ այս ինչ գիւղի ուսումնարանը հին է, այսինչ գիւղում ուսումնարան չկայ, այս ինչ գիւղի գրագարանին գրքեր շատ է պակաս, կամ այս ինչ գիւղի վարժապետն ու տէրտէրը կուսեցին և այդ բոլորին էլ օգնութիւն են հայցում:

Իսկ երբեկից հայ ազգը մտածել է արդեօք, թէ այս ինչ միկիտանի պատենտի ժամանակը հասել է, կամ շիրաջ Ծղալորը դուքնի քրէհ է պարտ, և կամ այս ինչ արախտինչին առևտուր չունի, որի արախտինը կարող է վախել:

Ոչ:

Հայ ազգը այդ չէ մտածում, իսկ մենք լուում ենք ու սպասում, թէ երբ կարծեսանայ հայը, երբ կիմանայ իր չարն ու բարին, և փոխանակ ուսումնարանների ու գրագարանների՝ կըմտածի մեզ համար, մեր այս համալսարանների համար, որտեղ զանազան տեսակ մարդիկ հաւաքւելով, իրենց փորի օգտին զանազան անւանի մարդկանց կենացները խմելով, այն էլ աւանց պրօֆեսօրների գասախօսութեան աւելի շատ բան են սովորում:

Սիրաջ Արգար

ՀՆՈՒՍԳՐՆԵՐ

Դիլորու
— Տեղական օրգան «Սախրէ» հաղորդում է, որ նախկին մամասախլիսի կողմնակիցները խիստ ազիտացիա են մղում: Մածնավաճառ Շաքրօն զինւած ոյժեր է հաւաքում, Օքրողանից մեծ քանակով և զաղտնի կերպով մահակներ են ստացւած: Ուազաթկաններով զինւած թուցիկ խմբեր են կազմւում: Հաւանական է, որ կաշերում հաւաքւող հին մարդիկ հրաժարական տան:

Տարախմելս.
Շվինդիսի մամասախլիս Գլխօն այցելից Տարախմելայ: Գուքանում մի չարէք գինի խմելուց յետոյ Շվինդիսի մամասախլիսը սրտանց ողջունեց Տարախմելայի մամասախլիսին և ասաց, որ այդ մի չարէք գինուց յետոյ եթէ երկրորդը գնայ, երկու հարկան գիւղերի բարեկամական յարաբերութիւնները աւելի ևս կամրանան: Երկու

*) Տես «Բիրառ» № 1.

մամասախլիսները մի լաւ հակախօսութեամբ պէտք է քննեն Դիլորուում: Կրօնագիտութեան քերի հարցը:

ՆԱՄԱԿ ՇԽԼՈՅԻ ԹԱՂԻՑ

(Սեփական թղթակից)

Հաւարար, 16 փետր.

Այսօր հողին յանձնեցինք հանգուցեալ Զղանոյի մարմինը:

Հանգուցեալը յայտնի էր, որպէս լաւ դումարբազ, լաւ խմող, ու ամեն պատահողին հայհոյող:

Նա իր կենդանութեան ժամանակ, ոչ մի վատ մարդու չի նեղացրել իսկ բոլոր լաւ մարդկանց փողերը կերել:

Հանգուցեալը մեռաւ յանկարծ և ժամանակ չունեցաւ կտակելու զաւակներին ու ազգականներին իր զանազան տեղերում քէֆ արած ժամանակահանից մնացած պարտքերը:

Նոյնամանակ

Լ Ր Ա Տ Ո Ւ

Թիֆլիս

Ընդհանուր հայերի թիւը իմանալու համար մի խումբ ինտելիգենտ մարդիկ մտադիր են ձրի բաժանորդագրութեամբ մի թերթ հրատարակել, կամ մի ձրի ներկայացում տալ:

Այսօր, երեկոյան քաղ. խորհրդարանի գահլիճում նշանակւած է ժողով՝ իրաւասուների զազանի խորհրդակցութեամբ վարչութեան անգամ ընտրելու համար: Խորհուրդը խնդրում է բոլոր վարչութեան անգամների բարեկամներին ներկայ գտնել:

«Երէկ «Բիրառի» խմբագրատանը խիստ խուզարկութիւն կատարւեց: Խուզարկութիւնը տեկց մինչև երեկոյ: Տպւած ու խմբագրատանը կանտրալը մնացած, բոլոր համարները գրաւեցին և տեղը ազատ մնաց այժմ կարելի է ազատ նստել, ապա թէ ոչ տպւած ու մնացած թերթերից շուտ գալու տեղ չկար: Խմբագրին ձերբակալեցին և տեսան որ գլխում բան չկայ՝ ազատ բաց թողին:

Երէկ փետր. 10-ին Խնքով ոմն ոստիկանութեան յանձնեց մի անագին մարդ, որին նա գտել էր իրենց պարտիզում: Գտած մարդու մարմնի ուռոյցքները քննելուց երևաց, որ կինը մի լաւ քոթակ տալուց յետոյ վնդղել է տանից, և խեղճը ստիպւած է եղել պարտէզում գիշերել:

ՅԱՅՏԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փթի տակ և ձեռնաու պայմաններով վաճառում են

ՀԱՅ ԹԵՐԹԵՐ

Շեմիչկավաճառներին և բազմբուրի ծախողներին՝ տպարակները համար՝ մեծ զեղջ: Դիմել «Բիրառի» խմբագրութեան: 10—1

ՈՒՇԱԿԻ ԴԻՊԼՈՄ

(Հայ գրականութեամբ զբաղողներին ուշադրութեամբ)

Այսու յայտնում ենք բոլոր այն մարդկանց, որոնք համարձակուած են գրականութեամբ զբաղելու և քննադատութիւն գրելու, այլևս իրաւունք չունենան այդ բանն անելու, առանց ճաշակի պատշաճաւոր դիպլոմի: հակառակ դէպքում նրանք կենթարկուեն զանակոծութեան և վիպասանական զարհուրելի ապատակի:

Այդպիսի, այսինքն ճաշակի դիպլոմներ կարելի է ստանալ վիպասան-գրամատուրգութեան բաժնի և զեղարեւոտագէտ ու միակ ճաշակի դիպլոմ ունեցող պ. Շիրվանզադէից: նրա մօտ քննութիւն տալուց յետոյ: Ինչպէս հարգուած են մեզ, պ. Շիրվանզադէն այդ ճաշակի դիպլոմները բերել է Պարիզից և այն մեծ քանակութեամբ:

Ցանկացողները եթէ ունեն պատրաստութիւն՝ կարող են դիմել պ. Շիրվանզադէին և ճաշակի քննութիւն տալով՝ ճաշակի դիպլոմ ստանալ:

Կրկնում ենք, բացի նրանից, ուրիշ ոչ ոքի մօտ ճաշակի դիպլոմ չի վաճառուած:

Ուրիշն նրան դիմեցէք:

Էլ ինչ էք ուզում...

Մօցիքով



Կիներ.—Բաւական է, էլ չեմ կարող տանել... դու ամեն երեկոյ հարբած ես գալիս տուն:

Ամուս.—Դու առաջուց գիտէիր, որ ես հարբեցող եմ, ինչու համար ամուսնացար ինձ հետ:

Կիներ.—Ես կարծում էի, որ կարող եմ քեզ ուղղել և մենք երջանիկ կըլինենք:

Ամուս.—Իսկ ես կարծում էի, որ դու ինձ կը հեռուես և մենք ամեն օր ուրախ կըլինենք:

Հարուստը հարցնում է իր աղքատ դրացուն:

—Ձեր տանն էլ մկներ կան, թէ ոչ... մեր խոհանոցը լիքն է անոնաներով:

—Մեր տանը հացի կտու, չկայ, մկներ ձրտեղից կարող են լինել:

Մ. Աղայեան



ՍՂՆԱԽ, 0,1 ՓԵՏՐԻԱՐԻ 1911 Թ.

«Հէյ գիդի ժամանակ», ասում է Սունդուկովի Խախտն—«Բուռն ու քարափն էլի էնդի ին, ամա մարթիկ ջլիս փոխիլ ին»: Ես խուսքիրը թամամ միր Սղնախին ին սագում: Տարիքն անցնում ին, խալիը փոխում է, ամա չգիդհնաս, թէ դրա լաւը, դրա վաղը:

Էրէխայ վուխտս, իս վուր ժամ էի գընում, էնքան խալի էր ըլում մօդ տրած էգեղեցում, վուր ասեղ գցելու տիղ չէր ըլում: Իրիք մինձ վերնատուն լիքն էլին կնդդիրքով սաղ մինձ պասին ճաշակողներին անպակաս էին. տէրտէրները շախով ժամ էին ասում. սիրտս փառաւորում էր, համա հիմի կիրազի օրիրը շատ քիչ մարդ է ըլում ու ժամում շատ խալվածքօր է: Մինձ պասին շատ քիչ մարդ է ճաշակում, տէրտէրների շախը ջլիս կոտրել է, (ասենք իրանք էլ ծերացել ին): Առաջ Սղնախում 10-ը տէրտէր կէր, հիմի վիցն է մնացի:

Սուրբի Կարապետի հայաթում մէ լաւ շօլ ունէինք էրկու էտաժանի, 8000 մանէթ փուղ աժէր: Վուխտին տիրութիւն չարին, պաչինկա ջուին, ընդուր համա կրիչն անձրից փթեց ու շինութիւնը քանդեցին: Հիմի էդ շօլից մենակ չուրս պատ է մնացի՝ Անու աւերակների համդը:

Էգեղեցական գուրծերու համա մինձ դաւի դարարա էր: Մոմի սկլագ ունէինք. ում ձիւքը նընգնում էր, փուղիրը նա էր անուշ անում: Պրատակօլ, կօնսիստօր, քննիչ զահլա էին տանում: Մենակ զօխտուր Մօսէտովը ու լուսահողիք Եղիազարովը ու Պլանչի տղէն պարզերես դուս էկան: Տարեկան մոմից աշխատում էին 700—1000 մանէթ, համա խալիը շատ բեզարից ու հիմի մոմի սկլագը տարեկան 500 մանէթով փողդարթով տւին:

Էս միր ջահրները խօմ դրանիցից անցան, պապիրոսը բերին, դիօգանալ շալվարները հաքներին չափում ու չափում ին բուլվարը: Հայերէն մօղա չէ, վուչ սովրում ին, վուչ էլ կարողում:

Լուսաւորութիւնը դիբաւ կնանոց էր: Առաջ միր կնանիքը խաղում էին լօտօ, համա հիմի լօտօ վիս էկադէբա: Հիմի կնանիքը խաղում ին «բանկ» ու թումաններ, մանէթների տանուլ տալի: Սարքում ին վէչիբներ ու մինչլիլի գիշերւայ սահաթի 2—3-ը «բանկ» ին խաղում ու էրէխերանց տներում մենակ թողնում: Էդ հէրիք չէ, հինգշաբթի օրիրը կլուրում մօղ ին ըլում ու «բամս» ին խաղում: Մէկ էլ սրա նրա տանը մօղ ին ըլում ու չասանի «բանկ» սարքում: Գաղէթ, գիր, օշով չէ կարթում:

Տէրը բարի տայ հին բարիշնէքին, շատիրը ասկասիր էին, հայերէն էին խօսում, քիչ ու միչ գաղէթ, գիր կարթում, ասկուրթիւնը պահում, համա նուր բարիշնէքը հայերէն չեն իմանում, դիփ ուսէվար ին կոտրտում:

Հինգ տարի առաջ բիրիօտէկա բաց ա-

րինք: Խալխին աղաչում էինք, քննադատ, վուր պան գաղէթներ, քրքեր, քրքեր, թէ գուղ մուքթա, համա էկող չեղաւ ու բիրբիրիօտէկէն կոխուից:

Առաջ ջալը ջալը հայերէն թիատր էինք սարքում, հիմի դրանց տիղը վէչէրներ ինք սարքում. ուտում, խմում ու տրտնդի տալի: Լէտնի թրիատր սարքեցին, 600 մանէթ փուղ խարջեցին, իժում քանդեցին:

Բարեգուրձական նընգիրութէնի ճիւղ բաց արինք, համար չքաշից ու մօշլա էլաւ:

Մի նէմէնց էկաւ. կանդրտխտ էր կապում քաղբի հիւ, թէ Սղնախում վազապրավօղ կու սարքիմ, կօսէ: Շատ խօսեցին, գրեցին, դումէն էլ հաստատից, համա էդ էլ մօշլա էլաւ:

Միր գալաւէն խոստանում էր, վուր Սղնախում թագա բօյն կըշինէ, ափթէք բաց կօնէ, լէչէրնիցա կու սարքէ, համա էդ էլ էրազնիր մնացին:

Մէ քանի ջահրներ փուղ մօղ արին ու նուր ճանապարհին 400 ծառ տնդեցին, ջըրհոր շինեցին, լիզնալու համա հաուղ սարքեցին. համա ծառիրը կոտրտեցին ու հաուզն էլ քանդեցին:


Բաղբի մէջտիղը ճամփէն քանդում է ու փոս է դառնում. հինգ տարի առաջ գօլովի պամօշնիկը փուղ մօղ արաւ, տէրութիւնն էլ փուղ տւից, ճանփա շինեցին, 4000 մանէթ խարջեցին, համա չգիմացաւ, էլի քանդից: Ասում ին լաւ շինելու համա 20,000 մանէթ փուղ է հարկաւուր: Ո՞վ կուտայ:

Համա քէփ անելու մէջ միր սղնախեցիքը շաղ գարգիմանդ ին: Լաւ քէֆ քաշել ին սիրում, լաւ համքօրա բիգիս պուրի սարքում ու լազաթի էլ հարբում, շատ փուղ էլ խարջում: Տօ, ամաուը քաղբից կանչեցին դէօլչի Բագրատին համքօրի, համա, չունքի նա լաւ խաղիր է ասում: Մէ շարթում նա 300 մանէթ փուղ տարաւ միր Սղնախից:

Էնէնց է միր բանիրը Գասպար աղա: Լաւ բան չինք տեհնում: Էս թանգութիւնն ու մարդ սպանին էլ խօմ միր հոքիքը հանեցին: 10—15 տարի առաջ զրվանքա լօքօն 4—5 կապէկ էր, հիմի 20—25 կապէկ է, քէսիք մարթը վուչնց առնէ: Տօ ալբաթ խէր, էդ ինչ ուցնալուր բան մօգօնեցին. մկների մուժուժը ով է իմացի. էդ խօմ սրտնիրս թամամ խաունեցին:


Իմացիլ իմ, վուր բէհալ իս էլի: Իս քիղ խորհուրդ կուտամ միր Լէգօյի էփած օշխարի խաշը ուտիս: Դուրթ է՝ բաս դալէվ Գարջօն ասում է, վուր ձիր քախկում տիրացու Եօսեփն էլ լաւ խաշ է էփում, համա Լէգօյի խաշը շատ անախկա է, քաղքումդ չիս ճարի: Գուզիս Լէգօն կու զրդի բիղ խաշ դիլիջանով նալօմնի պլատէժով, բեհալութիւնդ կանցնի ու հունարդ էլ կաւալանայ:

Չունձուլ Բաղի





ԱՍՈՒՄ ԵՍ...



Ասում ես՝ ինչո՞ւ միշտ տատապանք կայ Սիրող էակի սրտի խորքերում, ինչո՞ւ խնդումեան անհամբույր վկայ, նա միշտ արցունքներ, թախիծ է սիրում:

—Նայիր դու հեռուն՝ շարժող ամպերուն, Ե՛ւ փայլ կայ այժմ, եւ խնդում նրանց մէջ.

Բայց դի՛ր փոթորիկ նրանց ծալքերում, եւ արցունքները կրտեզան անվերջ...

Կրճիկի երկինքն, ամպերը շա՛ր-շար կերթան գգուտ արեւը պայծառ...
Եւ մո՛ւլթ կոփնտոնն, արցունքնե՛ր, թախիծ,
Որ ծածկեն շողերն երկրի հայեացքից:

Արեւիմ



Մի պարոն յուսահատած վճռում է տարճանակով վերջ տալ իր կեանքին, բայց քաջութիւն չունենալով նայում է հայելու մէջ իր դէմքին և արձակում տարճանակը ուղիղ ճակատին, բայց միայն թանկագին հայելին է վրէժում:

Մ. Ազադեան



ԼՈՒԲՁ ՀԱՐՑԵՐԻՆ ԼՈՒԲՁ ՊԱՏԱՍԽԱՆ

Ֆրիդրիխ Մեծը սովորութիւն ունէր ամեն անգամ, երբ վրէժն էր ընդունում իր թիկնապահ զօրաբանակը, գիմել նրան հետևեալ հարցերով.

—Քանի տարեկան ես:—Վաղուց է, որ ծառայում եմ:—Բաւականանում է քեզ քո սոճիկը:

Մի անգամ մի երիտասարդ զինուոր, ազգով Փրանսիացի, որ առաջ ծառայել էր իր հայրենիքին, ցանկանում էր ընդունել պրուսական ծառայութիւն: Շնորհիւ իր արտասակին, նա իսկոյն և յետ ընդունում է, բայց նա բոլորովին չգիտէր գերմաներէն

լեզուն. կառավարիչն ասաց, որ եթէ թագաւորը տեսնի՝ կըտայ այս հարցերը, որոնց պատասխանը խորհուրդ տւեց, անգիր սովորել, դրա համար սովորեցրեց մի օրւայ համար. և երբ ներկայացաւ զօրաշարքում, Ֆրիդրիխը մօտեցաւ նրան և հարցրեց, բայց ոչ սովորականին, այլ երկրորդից:

—Վաղուց է որ դու ծառայում ես:
—Քանի տարեկան եմ,—պատասխանեց զինուորը:

Թագաւորը զարմացած նրա ջանկութեամբ, որ ցոյց տւեց, թէ նա այդքան ծառայած չի լինի, ապա շարունակեց.

—Քանի տարեկան ես:
—Մէկ տարի է, թագաւորն ապրած կենայ:

Ֆրիդրիխը աւելի զարմացած բացականչեց.

—Կարելի է մեզնից մէկն ու մէկը խելագարուել է:

Զինուորը այդ երրորդ հարցի տեղ ընդունելով՝ հաստատօրէն ասաց.

—Այդպէս է, Ձերդ Բարձրութիւն:
Քարգ. Մ. Գասպարեան



ՊՐԱՒԱԳԻՐ ԴՍՐԲԱՆԴԱՆ

Իմ աչքի լիս դայի Բեասպար ջան.

Ափսոսանքով դայի, դորժած հոքի մարս վէր ասումար թա իմ ախպէր Բեասպարը վէր զազրանիցից կեայ, մեր կապկազը թամիւզ ինկիլի Պըրզաստանս գըւնըրական, ես հւատում չի, ասումի քաշալը իւրան փրփաղին հաւան կիկենայ. շատ մի ախպօրդ թորիփ անիլ, մէկ տեսնում վէր լիւսահոքի մօրս խօսքերը տեղնա գեալիս: Աստուծ ընրա գերէզիանին երայ լիւս զրկի ախըր հունց չասիմ, ախարիմ, վէր տեսնում վէր տասը տըրքանի մզէր թըրփընչիցս վախըմ, վէր փըլստրատի տուղ կուճուկներա, վէր թոկա փախած ըտվախատներա, վէր տասը մին շահի տեսած խմբագիրներա, վէր շիրախանըմ, չայչիխանըմ քոնիտոզ կըրըզավոյներա, վէր գեվաղեանալ շարվար կեցած դաշքեասաններա, վէր օվրս խօրուզ, ըայիրըզա ջիւջա, սօս-ալ քօսկրատներա: Հեալա էգ խիւրդա միւրդա հաճիճ-մաճիճ-նէն զրազ ախրած վէր Օսմանլըին Բըսփորի թուփէրանըս վախըմ, վէր կէմըստանի զօրբա գլխան, վէր զըզըըաշու 10 տըրեկան շահան, վէր էլ Փրանզաստանի թեազա արշա եկած տրօպլանից, մին խօսքով կըվկաղից փոնած, Հընդկաստանաւ թխած, ըմըրկանաւ դիւս եկած լօխլու հլորըմըս հափաղմը, բուրբ կըղընցնում, կըզէթըմէր գեաջում, ամմա մարթի ըրարմոնքը մարիփաթը շիլի մնան իւրան նշանց տալիս: Բեասպար դայի, գիրալիլ թա երբվանից

փայլան կարող Միօ սպէրը յոյժով զննելով քինաս ընտել, դիւզիւկչու թիւն զննելով զնա փող ըշխըղիլ տեղա: Ընվէ, պա տա ինէլի պէնա, խէ գլխէր ճիւս քացի տուվալ, վէր ձէքիղ վէսգի փէշակը թող անիս, քինիս դիւզիւկչիւթիւն անիս: Դայի, ես հեսայ իցցուն իրէք տըրեկան մարթըմ, էրէսունը չորք տարիս գուճանչութիւնըմ անըմ. ամմա թոհըս թա էգուց վէններըս մկնկան ետը մէր օլլուշաղը շուրըմըս օխտը կեազ պտանու մհար վէց ըրազի քթի, դայի վէր հըրըստանալըս օգուճ, խէըս չինդի փանդի ընկած, խէ չըս քըղաքի երայ կըվա գէւնըմ վէր մին չափիս օխտը կըտրիս: «Մեսա շիշ եանարն նես քեսըաք» ասող գուճի չըլէն, մէր տնգէր ընդերու սուսնարանէրին երայ հըքաքարճու, հաշիւը զավըրի պրիխաղի ասող մէր մըմբերին երայ գնճապէս: Թըրըվաթը զէն քցի, շուրըս քցի ասող գործակալ, մին տըրէկանից փոնած չուրու տասը տըրեկան կթիմների երայ ըպիկուն, է՛ն հինչ ասիմ, հզէր ըստի շուսա շուսա պշտօններ կայ, վէր հուվէր երան թխսըր եկած հաի մնան ճըկը սըմա, հըրըստանըմս զինքը դիւզըցընըմ, տօն տեղ ասնըմ, լեաւ օտըմ, լեաւ խմըմ, լեաւ քէփ անըմ, հեալա մընընուց էլ վասիաթ անըմ տասը քսան հըզէրաւ էս ժամին, էն սուճնարանին կտակ անըմ, ըրէնակ դէնըմ վէր ինքը ազգաէր մարթ ա:

Բեասպար դայի, բեալքի, ախիս, օլըմ չըմ ըստի թխած փուղերով հըրստանալիս, ես չէ ազգու փրկիչ տէնալի: Դէ վէր ըտընէնցա, մին լեաւ խորհուրդ տամ, վէր բէյնըմը ըմթմիշ ինի, բեալքի հըրստանաս, իմ ըսըխալս էլ մին բեան քըցիս: Թիֆլիզից եօր կօնիս մին վագօն հեաքին կըշկեած պըարատի դերեաներ, էրկու վագօն գօնդիկի շիւսքա, մին վագօն զրանց մհար խիւրդա միւրգա, իրէք վագօն բուղրի կրէմ, մի վագօն կարտ, հինգ վագօն էլ լօտօ, մին քանէ վագօն էլ կամփէտ, խօշգեաքար, թուշ կիլաս Դարբանդ, ըստի ապրանքու մհար ըստեղ գլօխն են ձողում, քու արկնըմ ասըմ, իրէք օրըմը կըմիտխօտիս, թամուզ իրէք հվէր մանէթ ըշխաղիս, դայի, էն էլ գրբիմ, ալան թալանի տարի ա, թա վէր կարըմս օնգատը քցի էր ըպրանքներան շատ կապ տօր, պենա վէր կարիւք վէր ձիւթի տատնիւրէք մանէթ խարջ օնիս, վիվիսկադ կըրփոխիս, կնկանդ, ես չէ բաջօղուդ անուճուվը կանիք, գուլ էլ մին քիւնլիւճ թան ընկած մուկնու մնան կըպըպըղիս, կասիս թա պէնա խարար չըմ: Արա, աշքէրդ բէց, ըստ ըրէնակներ շիւս եր կալ, է լնա քինի «Սըթըբալա» կըզէթիւր երայ ճըկուի, թոխը եկ, հմվա հըրցնողը թա թորնըս քիտ:

Բեասպար դայի, շատ խընթըրըմ, վէր զանաթ քաշիս մին ձէնք մարթամէջ դիւս գեալի շորեր զրկիս ինճ մհար, վէր քինամ կաստինցէք արակտիւրներ, գլուք, թատրօն, մին ընտելէք էլ աշքի տակաւ ընցըցիմ: Ասըմս մէր ջահէլ շուհուրները նղացալըն ինճանա, վէր իւրանց սայմիշ չըմ անըմ:

Գայի դորթն առած իրաւունք օնին հեալա չուրու մհեզ վէր դնկըզալ չըն, խաթըըն քրալ ես ու իմ Աստուծը:

Մնամ սառուստ քու ազիզ փազիզ բաջօլի Գամբէ Պոպոս




ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Տեղական «Կրուժօկի» անդամներէից մի քանիսի գլխում մի վերին աստաճանի խելացի և համակրելի միտք է յղացել, այն է. քէլատուի մօտ, քէլարկու թեան ժամանակ կանգնեցնել, մի իսկական ղարաշուխալու, և մի եւրոպական հագուստով անոտը՝ քեուսագալղիններ տիտղոսով, որոնց պարտքն է քէլ տուղ անդամներին թիւղրել սև քէլ ձգելու այն թղթակիցներէ քէլատուիք, որոնք կը համարձակեն «Կրուժօկի» այս, կամ այն անդամի կատարած ազիզ գործերը մէլոան ըրերու:

Տեղիցդ մի քանի թերթեր յայտարարեցին թէ քաղաքումս անչափ ձիւն է եկել:

Մեզ մօտ ջահէլները չեն յիշում թէ ձիւն եկած ինի, բայց ձերերը հաւատացնում են, որ հնումը ձմեռայ այս եղանակին, երկնքից քուլա-քուլայ, մալանչ-մալանչ, սիպտակ բամբակի նման քան էր թափուում և երբեմն օրերով գետնի վրայ մնում անհալ: Բայց հէնց որ արեգակի տաքութիւնը վրան էր ընգնում իսկոյն հալուում, գոլորշիանում, ջուր էր դառնում: Եթէ լրագիրներէ հաղորդած լուրը նկարագրած ձիւնին է վերաբերում, մենք չենք յիշում, այլ միայն 80 տարեկան ձերերն են յիշում:

Օգրգեալի



ՆԱՄԱԿ ԲԱԳԻԻՑ

Ամենայն Հայոց Խաթարալայի Շէֆապետին մերոյ Գասպար աղա Կալատուգօվին

Գասպար աղան, լսեր իմ օր եզէր իս Բաքի նաֆթի ֆօրեր առնելու, բարով խէրով իս էգեր, ոտքդ խէրով էղնի, հըմմա բան մը պիտի ըսեմ քեզի, հէչ մարդու չսես, լսեր իմ օր մեր Բաքի տուղերը ժողովքին էրեր ու խօսեր ին, օր ոտքդ խէրով չի էղեր, բիւն նասթ էղիր է, ու Բալախանու ֆօրերը ցամքեր ին, ու ջուր ֆանտան կէնին կը. էղուր հըմար էլ մեր տուղերը մղածիր ին օր գլխիդ մէ թագա մօղնի օյին մը խաղան:

Է գիդես ինչ օյին է:

Միտքդ է օր դոխտուր Լիսին գլխուն վրայ շիքիք քաշեցիր «Սաթարալային» մէջ. շտէ անօր պէս կուղին քէզի ընել, հըմմա քունը բիւս դահի գուլում է:

Մեր տուղ օղլաները մտածեր ին քեզվ ծանօթացնին մեր Բալախանում ֆօրերուն

հետ. և գլխուս վերայ նաֆթի ֆօրին աշխարք խրկին. հը էսօր ինչ կսէս լաւ բան մտածեր ին չէ, հարիֆները:

Է գիդես, Գասպար-ջան, ինձի օր լսիս բողջատ շուտ կը հաւաքիս էստից. բիւս խելք ունիս էստից շուտ փախիր:

Մեր տուղերը հանաք էնէլ չիտէն ու չէն էլ սիրեր, մէյմալ տեսար վը զգ՝ զ... ֆօրուն տակը ընկար:

Էս խաբարը ինձի Գեօզալ-Աղաբաջին ըրաւ, եսի ալ քեզի նամակով կը հասկցնիմ:

Օլմիա-Օլմիա նամակս մեր տուղերուն ձեռքն ընկաւ քեզի ալ ինձի ալ կգզէն, բուրթ կը շինին ու կաշիներս դաբաղներուն վրայ կը ծախին, օր չստէր կարին:

Է, էլ գրելիք չունիմ, նամակ վուզ գրիր իմ օր ձանջի փոշտով քեզի հասցնիմ շուտ. էլի կսեմ. ընձի լսէ ու փասա-փուսէզ հաւաքէ էստից. թէ չէ կաշէտ տիկ շինին կը ու նալօթ կենին թիֆլիս Հաւաբարին շիրաջներուն վրայ:

Մնամ քեզի հաւատարիմ ծառայ Խարէ-ժան-դը-Բիւլ

ԼԵԻ ՏՈՂՍՏՅՅԻ ՄՏՔԵՐԻՑ

(Կեանքի եւ մարդկանց մասին)

Մնափառութիւնից կամ հետաքրքրութիւնից և կամ թէ անզուսպ շահախնդրութիւնից զրգած իր կեանքը վտանգին ենթարկող մարդուն չի կարելի քաջ անւանել, իսկ ընդհակառակը՝ ընտանեկան պարտականութեան, ազնիւ զգացմունքի ազդեցութեամբ կամ ուղղակի հանողմունքով վտանգն արհամարհող մարդուն՝ չի կարելի վախկոտ համարել:

Չի կարելի որ միքանի մարդկանց առողջութեան համար հարկաւոր համարելի կործանել միս մարդկանց մարմինն ու հոգին, ինչպէս և չի կարելի, որ մի քանիսներէ առողջութեան համար ծծելի միւսներէ աբիւնը:

Ամեն մի մարդ ունի իւր առանձնայատկութիւնները և միշտ նա ունենում է իրեն յատուկ սեփական, նոր, բարդ, բժշկականութեան անծանօթ հիւանդութիւնը, ոչ թէ թոքերի, աղիքների, կաշւի, սրտի, ջրերի և այլ և այլ բժշկութեան մէջ գրւած հիւանդութիւնը, այլ մի հիւանդութիւն, որ բազկանում է այդ գործարանների անհամար տանջանքների իրար հետ շարկապակուց:

Չկայ մի այնպիսի անպիտան, որ փնտրէ և չգտնէ ուրիշ անպիտանների, որ և է կողմից իրենից աւելի վատ, և որ այդ պատճառով չկարողանայ առիթ գտնել հպարտանալու և իրենից զո՞հ մնալու:

Ընդհանուր մարդկային յատկութիւնն է ամեն մի ազնիւ միտք դարձնել խաղաղիք անափառութեան և դատարկացման:

Համայն բազմազանութիւնը, բոլոր գրաւչութիւնը, կեանքի ողջ գեղեցկութիւնը գոյանում է սուերից և լոյսից:

Մարդիկ կեանքում մեծ մասամբ ղեկավարում են ոչ թէ գործերով, այլ խօսքերով:

Յովակ Ասեփանեան

Դերասան Աղայեանի փոքրիկ որդին դիմում է Տօրը:

Արդից.—Հայրիկ, աւելի երջանիկ կըլինէի, եթէ ես որք լինէի և բախտաւոր, քան թէ ծնողներ ունենայի և այսպէս դժբախտ:

Հայր.—Ինչ անեմ զաւակս, երբ ինձ հաւածում են:

Արդից.—Այո... բայց ես ինչ յանցանք ունիմ, որ քեզ հետ ես էլ եմ տանջում...

S.



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Բացւած է 1911 թ. քաժանորդագրութիւն

„Լ Ո Յ Ս“

Գրական-Հասարակական շարաթաթերթի (Երկրորդ տարի).

„ԼՈՅՍ“-ի բաժանորդագիրը.—Ն. Նախիջևանի, Ռաստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ռ. կէս տ.-2 ռ. 3 ամ.-1 ռ.: Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ռ., կէս տար.-2 ռ. 50 կ. և 3 ամ.-1 ռ. 50 կ.: Արտասահ. տար.-6 ռ. կէս տարին 3 ռ. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.:

Հասցէն՝ Нахичевань н-Д. Въ редакцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Խմբ.-Նրատ. Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻՉԵԱՆ.


ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ



Կամպէկիսեև

Table with 2 columns: Year (Տ Բ Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ) and Price (e.g., 1906 թ. 5 ռ., 1907 թ. 7 ռ., 1908 թ. 7 ռ., 1909 թ. 7 ռ., 1910 թ. 7 ռ.)

Հին համարները հատով թիֆլիսում 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ.: Գիմել «Սաթարալա»-ի գրասենեակին:



—Ի՞նչ, քան, իսկի իշտան չունիմ... Էսօր ինչ իմ կերելի, երկու հաւ, մէ հնդուհաւ. մէ բլուղ լօրի, սիսեռ, բակլա, մի թեփշի փլաւ և էլի չիմ գիդա թէ ինչի իշտան չունիմ, ուզում իմ գոխաուրին տեհնիմ, դուք ինչ կօտիք, հը՞, լաւ չիմ անի:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ի Գ Ա Տ Ե Ր Ի Տ Ա Կ



—Հայր սուրբ, այս բոպէիս մի լաւ կաթողիկոսացու չունինք, դա փաստ է, բայց եթէ՛ գուր ինձ գովէք, ես ձեզ գովիմ՝ գուցէ երկուսիցս մէկը կաթողիկոս լինի—դա էլ բաւական է:

МАГАЗИЪ
Композиція

Тифлисъ. Пушкинскій пассажъ № 8
ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго компо-
зиціон. бѣлья.

Носитсаѣне менѣе
двухъ лѣтъ

Постоянный больш-
шой выборъ свѣ-
жаго товара.

Воротниковъ, ма-
нишекъ и ман-
жетъ.

по фабричнымъ
цѣнамъ.

Передѣлка въ лю-
бой фасонъ
бесплатно

Продюются портняжныя принадлежност-
ти, какъ-то пуговицы, подкладки, мѣль и
впрочѣе.

Имѣется также галантерейный
Отдѣлъ

00-32 М. А.КАЛТАКЯНЦЪ



Բ Ժ Ի Ը Կ

Արտաշես Երեսան

վերադառնալով արտասանմանից
վերակսեց հիւանդների ընդունե-
լովիւնը իր ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ,
Գանովսկայա փողոց № 15.

00-53



5-2

ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ
ЖИВОПИЩЕВА ВЪ Г.ОРЛЪ.

ԾԱԳԻՐ ՀՈՐՔՈՒԿ. Գէորգի արտադր. 50
մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ.
խաղաղակի մէջ—5 մարդու համար—5 կոպ.
Մի բարձրաց պակաս—է փանուկու մանա-
պարծամարի համար—30 կոպ. Երեք բար-
ձրաց անկի ուղղին համապատասխան
գինը մինչև 20 տոկոս, հարցն. Օրբոլ բա-
ղաք, Ծաղիկ հորթուկ փրփոյրացի.

ՊԱՏՐԱՍԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽՆՆՈՒԹ

ԿԻՐՇԵՆՈՒՄԻ ԵՒ ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

ՍԵԶՈՆԻ Զ Ա Մ Ա Ր ԱՏԱՅԻԱԾ

ԵՆ մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—ուսական և արտա-
ուսմաննան ֆարրիկաներից: Բոլոր ապրանքները ձեռք են բերած
առաջին ձեռքից և նշանակած են Ծ Ա Տ Ի Փ Ա Ն Գ Ն Ե Ր
Օտար քաղաքների պահանջները կատարում են
Հ Ո Ւ Տ Ա Փ Ո Յ Թ ԵՒ Զ Հ Տ Օ Ր Է Ն

00-1

ԹԻՓԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԳԻՐՔՈՎ
ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Խ Բ Օ Մ Օ - Լ Ի Տ Օ Գ Բ Ա Փ Ի Ա

Ա. Ի. ԲԻԵՆՈՎԻ

(ՇՐԱԲՄԵՆ ԵԱԿԵԱՏԱ.)

Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Օրոյնանի, տելեֆոն № 433.

Յայտնում է ի դիտութիւն պ. պ. պատւէր աւողների, որ վիճազրա-
տունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չա-
փով ընդարձակեց և աւելացաւ նոր կոնստրուկցիայի և ամենամեծ
զիրքի արագատիպ մեքենայով իր բոլոր օժանդակիչ պարագաներով:
Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատւէրները կա-
տարել շուտ, նշտութեամբ եւ Ա.Ի.Ե.Ի ԷՓԱՆ միւս վիճազրատներից:
ցանկանալով վիճազրական գործը կովկասում հասցնել իր արժանի
ըարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարա-
րեմ ժամանակակից տեխնիկային: Յոյս ունիմ, որ պ. պ. պատւէր
աւողները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերև յիշածներս և
կըպատւեն ինձ իրենց պատւէրներով, իսկ ես իմ կողմից ամեն
չանք գործ կըզնեմ բաւարարելու պահանջները:

20-5

Յարգանքներով—Ա. Ի. ԲԻԵՆՈՎ.

Բ Ա Յ Ի Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1911 թ.

„Դ Ա Ր Բ Ի Ն“

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ի

որ լոյս է տեսնելու Թիֆլիսում ներկայ փետրարի 13-ից:

№ 1-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

- 1. Մեր շաւիղը—Գ. Տէր-Ղևոնդեանի. 2. Տղամարդացող կիւնը—Կլարա Նու-
զէի. 3. Ծիծեռնայի երգը—Blaksmith-ի. 4. Բարեկամական խորհուրդ—Գէորգ
Ջէֆօնի. 5. Տարակո-Սարակո (վէպիկ գրպանահասանների կեանքից) Գ. Տէր-
Ղևոնդեան. 6. Մեխեր. I—Գէօ-Ղէօի 7. Փոստ-Նատոյի.

«ԴԱՐԲԻՆԸ» արժէ Թիֆլիսում տարեկան 2 ռ., 6 ամիսը 1 ռ. 20 կոպ.,
3 ամիսը 60 կոպ.: Թիֆլիսից դուրս. տարեկան 3 ռ., 6 ամիսը 1 ռ. 75 կ.,
3 ամիսը 1 ռ. Թիֆլիսում հատը 5 կ.:

«Սմբազրութիւնն ու գրասենեակը գտնուում են. Թիֆլիս, Михайловскій
пр. № 17—Վորոնցովի արձանի մօտ և բաց են 6—8 ժամը երեկոյեան.

0-4

Սմբազիր-հրատարակիչ Գ. Տէր-Ղևոնդեան



Մեծ պատի ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ շաբաթը

ՅԵՐԱՅԵՅԱՆ
ՅՈՑՊՈՒՄՈՅՅՆ

Պ. Ա. ԴՈՐՈՒԺՆՈՎԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱԳԱՋԻՆՆԵՐՈՒՄ

1) Գլխավորը՝ Սոլոլակի փողոց, տ. Գուրգենեանի.
Հեռախոս № 583.

2) Եարասլաւեանը՝ Միքայէլեան փողոց,
բողոքականների եկեղեցուն կից:
Հեռախոս № 838.

Ամեն տարւայ ընդունւած կարգով, ձեռնային սեզոնի վերջանալուց յետոյ, նշանակուած է սալորակիան մեծ պատի երկշաբթեայ

ԱՅԱԳԻՆ ԷԺԱՆԱԳԻՆ ՎԱՃԱՌԲ

Մեծ պատի առաջին երկու շաբաթների ընթացքում 12 օրով, այսինքն փետրւարի 21-ին, 22-ին, 23-ին, 24-ին, 25-ին, 26-ին, 28-ին եւ մարտի 1-ին, 2-ին, 3-ին, 4-ին եւ 5-ին:

Այդ երկշաբթեայ ԱՅԱԳԻՆ ԷԺԱՆԱԳԻՆ վաճառքի համար բոլոր յատուկ ճիւղերի վերաբերեալ կը յատկացւի 300,000 լուբլուց աւել ապրանք, որը պէտք է ծախւի զարմանալի էջան գներով, իսկ մի քանի ապրանքներ, որոնք դրւած էին լուսամուտների ցուցամուտների ցուցատեղերում և մողայից դուրս են եկել, կը վաճառւին մինչև 75 տոկոս

ԷԺԱՆ ԻՐԵՆՑ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐԻՑ

Լուսամուտների ահագին ցուցատեղերում դրւած են բոլոր ճիւղերի ապրանքներ օժտւած առասպելական էջան գների ցուցամուտներով:


Առևտուրն այդ էջանագին վաճառքի օրերը տեղի կունենայ առաւօտեան ժամը 9¹/₂-ից մինչև ցերեկայ ժամը 2¹/₂ և ժ. 4¹/₂-ից մինչև 6¹/₂ երեկոյեան:

Ք. Տ. էջանագին վաճառքի ապրանքները վերադիր վճարով չեն ուղարկուում:

Պ. Ա. ԴՈՐՈՒԺՆՈՎ.



ქართული
ლიბრერი



ფეხიღი 19-ის სი მისი, მისი სი სი